Յ. Վ. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ, Ա. Ա. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

6

Վերահրատարակություն

Երաժշտական ստեղծագործությունների համացանցային հղումներով

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2021

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀՏԴ 373.167.1:78(075.3)
ԳՄԴ 85.31g72
Յ 671

Մասնագիտական խմբագիր՝ Յակով Իվանի Խաչիկյան
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դասագրքին կից տեսաձայնային նյութերը կարող եք գտնել շապիկին պատկերված QR կոդի միջոցով կամ հետևյալ հղումով.

www.zangak.am/9789939680330

Դասագրքի էջերում տեղադրված QR կոդերը համապատասխան նյութերի անմիջական հղումներն են:

Յուզբաշյան Յ., Փահլևանյան Ա.
Յ 671 Երաժշտություն: 6–րդ դաս. դասագիրք/Յ. Յուզբաշյան, Ա. Փահլևանյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2021.— 64 էջ:

ՀՏԴ 373.167.1:78(075.3)
ԳՄԴ 85.31g72

ISBN 978–9939–68–033–0

© «Զանգակ–97» ՍՊԸ, 2021
© Յուզբաշյան Յ., 2021
© Փահլևանյան Ա., 2021
© ԴՏՀՏՇՀ, 2021

Սիրելի՛ 6–րդ դասարանցիներ

Նախորդ դասարանների դասագրքերից գիտեք, որ երաժշտության երեք տեսակները՝ երգը, պարը, քայլերգը, համարվում են երաժշտության հիմնասյուները: Դրանք օգնում են ավելի լավ հասկանալու երաժշտության մեծ ու բարդ ժանրերը՝ օպերան, բալետը, սիմֆոնիան, կանտատը, կոնցերտը և այլն, որովհետև այդ ժանրերի մեջ ներթափանցված են հենց ձեզ քաջածանոթ երգը, պարը, քայլերգը:

Վեցերորդ դասարանի դասագիրքը ձեզ կօգնի ծանոթանալու երաժշտական նոր ժանրերին, նրանց բնույթին, բովանդակությանը, ձևին, կառուցվածքին: Դուք կլսեք երաժշտական նոր ստեղծագործություններ և կընկալեք ***երաժշտական կերպար*** և ***երաժշտական կերպարի զարգացում*** հասկացությունները:

Բարի՛ երթ դեպի երաժշտության հրաշագործ ու հետաքրքրական աշխարհը:

Արամ Խաչատրյանի արձանը իր անունը կրող համերգասրահի դիմաց

«Մեսրոպ Մաշտոց»
Նկարիչ՝ Արա Բաղդասարյան

ԻՄ ՈՒՍՈՒՑԻՉ

Խոսք՝ Ա. Մարաշյանի
Երաժշտ.՝ Ա. Լուսինյանի



Դու գիտության արշալույսի
Վառ շողեր ես պարգևում,
Թև ես տալիս մեր երազին
Իմաստությամբ քո անհուն:

Քո պարգևած լույս թևերով
Կճախրեմ ես շարունակ
Եվ մի օր էլ կսավառնեմ
Մոլորակից մոլորակ:

Կրկներգ

Հոգուս մեջ ես դու ամենուր,
Իմ ուսուցի՛չ, իմ անգի՛ն,
Դու՝ հարատև լույսի աղբյուր,
Մտքիս զանգակն առաջին:

Կրկներգ

Հոգուս մեջ ես դու ամենուր,
Իմ ուսուցի՛չ, իմ անգի՛ն,
Դու՝ հարատև լույսի աղբյուր,
Մտքիս զանգակն առաջին:

ԹԵՄԱ 1

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐ

Երաժշտական ստեղծագործություններն ունենում են տարբեր բնույթի և կառուցվածքի մեղեդիներ, որոնք առաջացնում են յուրօրինակ զգացողություն, որոշակի տրամադրություն և երևակայության մեջ ստեղծում են երաժշտական կերպարներ:

Արվեստի մյուս տեսակները նույնպես ունեն կերպարներ, օրինակ՝ գրական ստեղծագործության մեջ կերպարը գործող անձն է, որն ունի բնավորության և վարքագծի որոշակի հատկանիշներ: Երաժշտական ստեղծագործության գործող անձը մեղեդին է, որի միջոցով ստեղծվում է որոշակի բնույթ ու բովանդակություն ունեցող երաժշտական կերպար: Այդ կերպարը կարող է լինել ուրախ, տխուր, կայտառ, խոհալից, առնական, հեզանազ և այլ բնույթի՝ մեր մեջ առաջացնելով որոշակի հույզեր և ստեղծելով համապատասխան երաժշտական մտապատկերներ, կերպարներ:

Ուսումնառության տարիներին դուք հաճախ եք լսել ***կերպար*** բառը, երբ ծանոթացել եք երգին, պարին, քայլերգին: Երաժշտության այդ երեք տեսակները իրենց բնույթով, բովանդակությամբ ու կառուցվածքով յուրօրինակ կերպարներ են:

Օրինակ՝ առաջին դասարանում ձեր սովորած «Արև՛, արև՛» հայկական ժողովրդական երգի մեղեդին արտահայտում է մեկ տրամադրություն, երաժշտական մեկ ամփոփ միտք: Դա նշանակում է, որ այդ երգն ունի երաժշտական մեկ կերպար:

Երկրորդ դասարանում սովորած «Լեպիո՛, լե՛, լե՛» հայկական ժողովրդական երգն ունի տարբեր բնույթի երկու մեղեդի և արտահայտում է երաժշտական երկու տրամադրություն: Նշանակում է, որ այդ երգն ունի երաժշտական երկու կերպար:

«Լեպիո՛, լե՛, լե՛» երգի առաջին մասի մեղեդին երգային է, ունի դանդաղ տեմպ և 2/4 չափ: Երկրորդ մասը՝ «Հոդալլո»–ն, պարային է, ունի աշխույժ տեմպ և 6/8 չափ:

Երգի երաժշտական երկու կերպարները ոչ միայն իրար լրացնում են՝ ստեղծելով մեկ ընդհանուր՝ ծավալուն երգ, այլև հակադրվում են՝ նպաստելով երաժշտության զարգացմանը:

Սովորեք «Լեպիո՛, լե՛, լե՛» երգը սովորե՛ք երկձայն, երգե՛ք և պարե՛ք:

Կատարեք Առաջին՝ դանդաղ մասում պարում են աղջիկները, իսկ երկրորդ՝ արագ մասում միանում են նաև տղաները:

ԼԵՊՀՈ՛, ԼԵ՛, ԼԵ՛

Հայկական ժողովրդական երգ
Մշակումը՝ Ք. Կարա–Մուրզայի



Աղջի՛, սիրուն,
Սարի՛ մարալ,
Բա քո սրտում սեր չկա՞...

Կրկներգ Հոդալլո՛ ջան, հոդալլո՛ ջան, հոդալլո՛,
Աչեր սիրուն, դարալլո՛ ջան, դարալլո՛:

Կոմպոզիտոր Քրիստափոր Կարա–Մուրզան «Լեպհո՛, լե՛, լե՛» երգը մշակել է երկսեռ քառաձայն երգչախմբի համար:

Ունկնդրե՛ք և արտահայտե՛ք ձեր տպավորությունները:

Ունկնդրեք

ՔՐԻՍՏԱՓՈՐ ԿԱՐԱ–ՄՈՒՐԶԱ

(1853–1902)

Առաջին հայ խմբավար, կոմպոզիտոր, հրապարակախոս և մանկավարժ Քրիստափոր Կարա–Մուրզան ծնվել է 1853 թվականին Ղրիմի Կարասուբազար քաղաքում: Տասը տարեկանից նա սովորել է նվագել դաշնամուր և ֆլեյտա, ստացել է երաժշտատեսական կրթություն: Պատանեկան հասակից մասնակցել է քաղաքի մշակութային կյանքին. ելույթ է ունեցել հանդեսներում, երաժշտություն գրել ինքնագործ թատերախմբի ներկայացումների համար:

Մեծագույն հայ երաժիշտը կարծում էր, որ հայ ժողովրդի երաժշտական արվեստը զարգացնելու համար անհրաժեշտ է նրա գիտակցության մեջ և կենցաղում արմատավորել բազմաձայնությունը: Ուստի անհրաժեշտ էր ոչ միայն քառաձայն երգչախմբեր կազմակերպել, այլև երգացանկ ստեղծել: Այդ նպատակով նա մշակել է բազմաթիվ հայկական ժողովրդական, աշուղական, հայրենասիրական երգեր: Նա մշակել է նաև ռուսական, ուկրաինական, մոլդովական, վրացական, քրդական երգեր՝ նպաստելով տարբեր ազգությունների երգարվեստների փոխադարձ ճանաչմանը:

Մեծ ջանքերի շնորհիվ Կարա–Մուրզային հաջողվել է կազմակերպել հայերի առաջին քառաձայն երգչախումբը և ներկայացնել հայկական բազմաձայն երգի առաջին համերգը: Այդ իրադարձությունը տեղի է ունեցել 1885 թվականին Թիֆլիսում, որն այդ ժամանակաշրջանում հայաշատ մշակութային կենտրոն էր:

Քրիստափոր Կարա–Մուրզայի երգեցիկ խումբը կովկասյան ցուցահանդեսում, Թիֆլիս, 1901 թ.

17–ամյա համերգային գործունեության ընթացքում Կարա–Մուրզան Կովկասի 49 հայաշատ բնակավայրերում կազմակերպել է 92 երգչախումբ և հարյուրավոր համերգներ՝ հնչեցնելով իր մշակած բուն հայկական ժողովրդական երգերը՝ «Լեպհո՛, լե՛, լե՛», «Հո՛վ արեք, սարե՛ր ջան», «Լորիկ», «Ջինչ ու զինչ», «Ջիմ վզի», «Գացե՛ք, տեսե՛ք», «Ալազյազ», «Քեզի մեռնեմ» և այլն: Նրա խմբերգերը մեծ դեր են կատարել հայ երաժշտական մշակույթի զարգացման գործում:

Ունկնդրե՛ք «Գացե՛ք, տեսե՛ք» ժողովրդական կատակերգի բազմաձայն մշակումը երգչախմբի համար և ասացե՛ք, թե քանի երաժշտական կերպար կա երգում:

Ունկնդրեք

Ինչպես նկատեցիք, «Գացե՛ք, տեսե՛ք» երգը բաղկացած է տարբեր բնույթի, տեմպի, չափի և բովանդակության երգ–մեղեդիներից (կերպարներից), որոնք կատարվում են հաջորդաբար՝ որպես ամբողջական երգ: Նման բազմամեղեդային երգերը և նվագարանային ստեղծագործություններն անվանում են ***ռոնդո:***

Ռոնդոն ֆրանսիական շուրջպար է: Այն կատարում են խմբով և մենապարով:

Ռոնդո ձևի ստեղծագործությունը ունենում է երեք տարբեր մեղեդիներ, որոնցից մեկը գլխավորն է և նշվում է Ա տառով, մյուսը՝ Բ, երրորդը՝ Գ: Գլխավոր մեղեդին՝ Ա–ն, հնչում է երեք անգամ՝ Բ և Գ մեղեդիներից հետո:

Այսպիսով՝ ռոնդո ձևի ստեղծագործությունը բաղկացած է հինգ մասից և ներկայացվում է ԱԲԱԳԱ բանաձևով:

Սովորեք

Ռոնդո ձևը ավելի լավ հասկանալու համար սովորե՛ք «Դասարանային ռոնդո» երգը:

Աշակերտները միասին երգում են Ա երգ–մեղեդին: Ավարտից հետո Բ երգ–մեղեդին երգում են տղաները: Տղաների երգից հետո բոլորը միասին նորից երգում են Ա երգ–մեղեդին: Այնուհետև աղջիկները երգում են Գ երգ–մեղեդին: «Դասարանային ռոնդո» երգը եզրափակվում է Ա երգ–մեղեդիով, որը երգում են բոլորը միասին:

ԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ՌՈՆԴՈ





Կատարեք

Այժմ ձեր իմացած երգերից ստեղծե՛ք դասարանային ռոնդո՝ պահպանելով ԱԲԱԳԱ բանաձևի պահանջները:
Ռոնդոն շատ տարածված է նվագարանային երաժշտության մեջ:

Ունկնդրեք

Ունկնդրե՛ք Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի ռոնդոն Լա մաժոր սոնատից:
Ուշադիր լսե՛ք և որոշե՛ք, թե ռոնդոյի մեղեդիներից որն է գլխավորը, և յուրաքանչյուր մեղեդին ի՞նչ տրամադրություն է արտահայտում:

Հարցեր և առաջադրանքներ

- Ի՞նչ է երաժշտական կերպարը և ի՞նչ դեր է կատարում երաժշտական ստեղծագործության մեջ:
- Քանի՞ երաժշտական կերպար ունի «Գացե՛ք, տեսե՛ք» երգը:
- Պատմե՛ք Քրիստափոր Կարա–Մուրզայի մասին:
- Ի՞նչ կառուցվածք ունի ռոնդոն:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԺԱՆՐ

Երաժշտության տեսակներն ունեն տարբեր բովանդակություն, ձև, կառուցվածք, երաժշտական կերպարների տարբեր փոխհարաբերություն:

Երգը երաժշտության պարզ տեսակ է, ունենում է մեկ կամ երկու մատչելի ընկալվող երաժշտական կերպար:

Սիմֆոնիան երաժշտության բարդ տեսակ է, ունենում է բազմաթիվ հակադիր կերպարներ, որոնց փոխհարաբերության շնորհիվ սիմֆոնիայի երաժշտությունը զարգանում է:

Ձևով, բովանդակությամբ, կառուցվածքով, կատարողական կազմով կամ այլ ընդհանուր հատկանիշերով միավորված երաժշտության տեսակներն անվանում են ***ժանր:***

Երգը, օպերան, բալետը, սիմֆոնիան, կոնցերտը երաժշտական տարբեր ժանրեր են:

Տեսարան «Անուշ» օպերայից

Տեսարան «Սպարտակ» բալետից

Երգչական ժանրի լավագույն նմուշներից է Կոմիտասի «Անձրևն եկավ» երգը:

Սովորեք Երգը սովորե՛ք երկձայն: Իմացե՛ք՝ երկրորդ ձայնը հարստացնում է հնչողությունը, երգը դարձնում ավելի հետաքրքիր ու նպաստում մեղեդու զարգացմանը:

ԱՆՁՐԵՎՆ ԵԿԱՎ

Կոմիտաս



Անձրևն եկավ շաղալեն,
Ուռու տերև դողալեն:
Վա՛յ, լե՛, լե՛, լե՛,
Լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛:

Հրես եկավ իմ ախպեր,
Ալ ձին տակին խաղալեն:
Վա՛յ, լե՛, լե՛, լե՛...

Խալիչեքը փռել եմ,
Նախշուն բարձեր դրել եմ:
Վա՛յ, լե՛, լե՛, լե՛...

Ունկնդրե՛ք «Անձրևն եկավ» ժողովրդական երգի Կոմիտասի մշակումը երգչախմբի կատարմամբ:

Ունկնդրեք

Պատմե՛ք «Անձրևն եկավ» երգի երաժշտական կերպարի մասին:



«Անձրև»
Նկարիչ՝ Արա Բաղդասարյան

ԿՈՄԻՏԱՍ

(1869–1935)

Հայ դասական երաժշտության հիմնադիր Կոմիտասը երաժշտական մշակույթի բազմակողմանի գործիչ էր, հայ ժողովրդական երգի հիանալի գիտակ: Նա հայտնաբերել և գրի է առել գեղջկական երգերի հազարավոր նմուշներ: Կոմիտասը այդ երգերի անզուգական կատարող էր: Իր հավաքածուի լավագույն նմուշները նա մշակել է ձայնի և դաշնամուրի համար, բազմաձայն դարձրել և ներկայացրել երկսեռ երգչախմբի կատարմամբ՝ ստեղծելով արտահայտիչ երաժշտական կերպարներով հարուստ բարձրարվեստ ստեղծագործություններ:

Կոմիտասը նաև երաժշտագետ էր. հայտնի են հայ հոգևոր և ժողովրդական երգարվեստի ուսումնասիրությանը նվիրված նրա աշխատությունները:

Կոմիտասը մեծ ավանդ ունի հայ հոգևոր երաժշտության ասպարեզում: Հայոց պատարագի բազմաձայն մշակմամբ և բազմաթիվ հոգևոր երգերի արժեքավոր գրառումներով նա աղավաղումից փրկել է մեր հոգևոր երաժշտության բարձրարժեք նմուշները:

Կոմիտասը երաժշտական–հասարակական գործիչ էր և հրապարակախոս: Նա հոդվածներ է գրել, գիտական դասախոսություններով հանդես եկել Գերմանիայում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում՝ հանրությանը ներկայացնելով հայ երգը, որը հայտնություն էր Եվրոպայի երաժիշտների ու երաժշտասերների համար:

«Գուսան» երգչախումբը, Կ. Պոլիս, 1910 թ.

Կոմիտասը հմուտ խմբավար էր և մանկավարժ: Կոստանդնուպոլսում նա ստեղծել է 300 հոգուց բաղկացած «Գուսան» երգչախումբը, սովորեցրել իր մշակած ժողովրդական երգերը և համերգներ տվել ոչ միայն Պոլսում և Թուրքիայի հայաշատ քաղաքներում, այլև Եգիպտոսի քաղաքներում՝ ամենուրեք համերգից առաջ հանդես գալով դասախոսությամբ:

Կոմիտասն աշխարհին ցույց էր տալիս մաքուր, առանց աղավաղումների հայկական տոհմիկ երգը: Նա չափազանց պահանջկոտ էր ոչ միայն հայ ժողովրդական երգերի մեղեդիների ոճական մաքրության, այլև կատարողականության նկատմամբ: Կոմիտասը սովորեցնում էր երգել պարզ, առանց պաճուճանքների, ժողովրդական երգին անհարիր ավելորդ ձայնային դայլայլների: Ժողովրդական երգը ո՛չ ռոմանս է, ո՛չ օպերային մեներգ (արիա), ո՛չ աշուղական երգ, որոնք, իբրև առանձին ժանրեր, ունեն իրենց ոճական հատկանիշերը և կատարողական առանձնահատուկ ձևը:

Հայ ժողովրդական երգը կարիք չունի օտար երգարվեստի կատարողական ձևի նմանակման:

Ժողովրդական երգերի գողտրիկ մշակումներում Կոմիտասը բազմաձայնության միջոցներով ներկայացրել է ժողովրդի հոգու խորությունն ու ինքնատիպությունը:

Վազգեն Առաջին

Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը գրել է, թե Կոմիտասի գործը կարելի է արժևորել միայն մեսրոպյան չափանիշով. «Ինչպես սուրբ Մեսրոպը իր ազգին ու աշխարհին պարգևեց կոթողը հայոց լեզվի, այնպես էլ Կոմիտաս վարդապետը պեղեց, մաքրեց և լույս աշխարհ բերեց կույս աղբյուրը հայ երգի: Հայ ժողովուրդը կոմիտասյան երգի մեջ գտավ, ճանաչեց իր հոգին, ինքնությունը»:

Ունկնդրե՛ք

Ունկնդրե՛ք Կոմիտասի «Կուժն առա» և «Գնա՛, գնա՛» խմբերգերը: Հաճախ երկու տարբեր բնույթի երգեր կատարվում են մեկը մյուսից անմիջապես հետո՝ որպես մեկ ամբողջական երգ:

Սովորե՛ք

Սովորե՛ք «Նայ, նայ» ժողովրդական երգը կանոնի ձևով: Բաժանվե՛ք երկու խմբի: Երբ առաջին խումբը կհասնի 5–րդ տակտին, նրան կմիանա երկրորդ խումբը՝ երգելով սկզբից:

ՆԱ՛Յ, ՆԱ՛Յ

Հայկական ժողովրդական երգ

Չափավոր, պարային



Սարեն կուգա ջուխտըմ ղոչ,
Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,
Մինը՝ փնջած, մինը՝ ոչ,
Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ:

Աստված քու դատիդ մեռնեմ,
Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,
Մինին կուտաս, մինին՝ ոչ,
Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ:

Ուռի ծառը կանանչ է,
Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,
Չարդ ու բարիդ ճանանչե՛,
Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ:

Չար մարդկանցից հեռացի՛ր,
Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,
Որ խիղճդ քեզ չտանջե,
Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ:

ԻՆՏԵՐՎԱԼ

Նախորդ դասարանում դուք ծանոթացել եք ***պրիմա, սեկունդա, տերցիա, կվարտա, կվինտա*** ինտերվալներին:

Այժմ ծանոթացեք ***սեքստա*** ինտերվալին:

Սեքստա նշանակում է վեցերորդ: Սեքստա ինտերվալը հնչյունաշարի որևէ ձայնաստիճանի և, նրանից հաշված, վեցերորդ ձայնաստիճանի միջև ընկած տարածությունն է:

Ներկայացնենք ***ռե, մի, ֆա դիեզ, սո, լա, սի*** հնչյունաշարի սեքստա ինտերվալը.



Դուք նկատեցիք, որ «Նայ, նայ» երգի մեղեդու ամենացածր և ամենաբարձր հնչյունների միջև ընկած է ***սեքստա*** ինտերվալը:

Կատարեք Երգեք երգը և ցույց տվեք ***սեքստա*** ինտերվալը:

Հարցեր և առաջադրանքներ

- Երաժշտական ինչ ժանրեր գիտեք:
- Բնութագրեք Կոմիտասի դերը հայ երաժշտության մեջ:
- «Անձրևն եկավ» երգը կատարեք երկձայն:
- Պատմեք երգերից ստացած ձեր տպավորությունները:
- Ինչ ինտերվալներ գիտեք:
- Պատմեք «Նայ, նայ» երգից ստացած ձեր տպավորությունները:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ ՕՊԵՐԱՅՈՒՄ

ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ

(1879–1950)

Կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը «Անուշ» օպերայից բացի ստեղծել է նաև «Դավիթ բեկ» պատմահայրենասիրական օպերան՝ ըստ հայ վիպասան Ռաֆֆու համանուն պատմավեպի, որտեղ ներկայացվում է XVIII դարի սկզբին հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը: Օպերայի առաջին բեմադրությունը տեղի է ունեցել 1950 թվականի դեկտեմբերին՝ կոմպոզիտորի մահից հետո: Արմեն Տիգրանյանը ստեղծել է արտահայտիչ երաժշտական կերպարներ՝ հերոս զորավար Դավիթ բեկ և նվաճողական մոլուցքով համակված պարսից խան, քաջարի հայ մարտիկ Ստեփանոս Շահումյան և դավաճան իշխան Մելիք, հանուն հայրենիքի ազատության պայքարող երկրագործ Սանթուր և Ստեփանոսի անվեհեր հարսնացու Շուշան: Այս կերպարների հարաբերությունները և հայրենիքի ազատագրման համար ապստամբած ժողովրդի հերոսական պայքարն են ընկած օպերայի բովանդակության հիմքում:

Դավիթ բեկի՝ հայրենասիրական ոգով տոգորված մեներգը հայ ժողովրդին ուղղված մարտակոչ է:

Միհրան Երկաթը Դավիթ բեկի դերում

Ունկնդրեք

Ունկնդրե՛ք Դավիթ բեկի մեներգը և արտահայտե՛ք ձեր տպավորությունները: Քանի՞ մասից է բաղկացած մեներգը: Բնութագրե՛ք երաժշտական կերպարները:

Ունկնդրեք

Ունկնդրե՛ք «Տղամարդկանց քայլերգը» «Դավիթ բեկ» օպերայից և բնութագրե՛ք:

«Տղամարդկանց քայլերգը» աչքի է ընկնում հաղթական բնույթով՝ հստակ, արտահայտիչ ռիթմի և առույգ հնչերանգի շնորհիվ: Դա ցայտուն է արտահայտվում քայլերգի երկրորդ մասում, երբ շեշտը տակտի ուժեղ մասից տեղափոխվում է թույլ մասը՝ ավելի ընդգծելով քայլերգի կամային, առնական բնույթը:

Տեսարան «Դավիթ բեկ» օպերայից

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՔԱՅԼԵՐԳ

«Դավիթ բեկ» օպերայից

Երաժշտ.՝ Ա. Տիգրանյանի



Մեզ չի ընկճի ո՛չ շղթան,
Ո՛չ կապանքներ, ո՛չ զնդան,
Փշրենք լուծը օտարի
Անագորույն բռնության:

Եվնենք ահեղ պայքարի,
Փշրենք շղթան օտարի,
Կամքով անհաղթ, անպարտ
Եվնենք մարտի:

Սովորեք Սովորե՛ք «Տղամարդկանց քայլերգը» «Դավիթ բեկ» օպերայից: Ինչպիսի՞ տրամադրություն է արտահայտում այդ երգը, երաժշտության ո՞ր տեսակին կարելի է դասել, և ի՞նչ բնույթի են երաժշտական կերպարները:

Երաժշտության մեջ շեշտի տեղափոխումը տակտի ուժեղ մասից թույլ մասը կոչվում է *սինկոպա:* Սինկոպան հունարեն բառ է, որը նշանակում է կտրատել, կրճատել:



Կատարեք Ծափեք կամ ռիթմական նվագարանով կատարեք հետևյալ ռիթմական պատկերը և ցո՛ւյց տվեք սինկոպաները:



Կատարեք Երգեք նոտաների վանկային անուններով և կռահեք, թե որ երգն է: Ապա նույն ռիթմական պատկերը երգեք ռիթմի վանկային անուններով:

Հարցեր և առաջադրանքներ

- Ո՞վ է գրել «Դավիթ բեկ» պատմավեպը, և ո՞վ է համանուն օպերայի երաժշտության հեղինակը:
- Ի՞նչ գիտեք «Դավիթ բեկ» օպերայի մասին:
- Ի՞նչ ժանրի ստեղծագործություն է «Տղամարդկանց քայլերգը»:
- «Տղամարդկանց քայլերգը» կատարեք երկձայն:
- Ի՞նչ է սինկոպան: Բերեք օրինակ ձեր իմացած երգերից:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ

Երաժշտությունն անմիջականորեն ներգործում է մեր զգայարանների վրա, առաջացնում հույզեր, զգացմունքներ, հետո միայն հասնում մեր գիտակցությանը: Պատահական չեն ասում. *«Երաժշտությունը պետք է ոչ միայն լսել լսողությամբ, այլև ընկալել սրտով ու հոգով»:* Երաժշտության ներգործության ուժի գաղտնիքները գեղեցկությունն ու բարեհնչությունն են, մարդուն խորապես հուզելը, նոր զգացմունքներ և մտքեր առաջացնելը:

Երաժշտությունը կարծես հայելի լինի, որի մեջ մարդը տեսնում ու ճանաչում է իրեն ու շրջապատող աշխարհը:

Երաժշտությունը կրթում է հոգին, ակտիվացնում մտքի աշխատանքը: Ներգործելով մարդու նյարդային համակարգի վրա՝ երաժշտությունը նաև նպաստում է առողջացմանը: Բժիշկներն արձանագրել են, որ որոշ հիվանդություններով տառապողների վրա ապաքինող ազդեցություն է գործում Մոցարտի, Բեթհովենի, Կոմիտասի, Արամ Խաչատրյանի և շատ այլ հրաշալի կոմպոզիտորների դասական երաժշտությունը:

Ունկնդրե՛ք «Լուսնի սոնատը» և արտահայտե՛ք ձեր զգացողությունները: Ի՞նչ անվանում կառաջարկեիք դուք:

Ունկնդրեք

Սոնատը երաժշտական բարդ ժանրերից է: Սոնատի անվանումը ծագել է իտալերեն **սոնարե** (sonare) բառից, որը նշանակում է **հնչել:** Սոնատի ժանրը զարգացել է XVII դարում: Սոնատներ են գրել Կորելլին, Վիվալդին, Սկարլատին, Հայդնը, Մոցարտը, Բեթհովենը, շատ հայ և այլազգի կոմպոզիտորներ:

Սոնատը հիմնականում ունենում է երեք կամ չորս մաս: Կան նաև մեկ կամ երկու մաս ունեցող սոնատներ: Եռամաս սոնատի առաջին և երրորդ մասերը սովորաբար արագ տեմպ են ունենում: Դրանց հակադրվում է դանդաղ, քնարական միջին մասը: Սա սոնատի ավանդական ժանրային հատկանիշն է: Սակայն լինում են նաև այլ օրինակներ:

Մ. Իվանենկո.
«Լուսնի սոնատը»

Լյուդվիգ վան Բեթհովենի «Լուսնի սոնատը», որը համաշխարհային դաշնամուրային գրականության գլուխգործոցներից է, բաղկացած է երեք մասից:

Առաջին մասը, ի տարբերություն ավանդական կարգի, դանդաղ է: Երաժշտության անշտապ ընթացքն ունկնդրին տեղափոխում է երազանքների աշխարհը, թախծոտ տրամադրություն առաջացնում:

Երկրորդ մասն արագ է: Երաժշտական կերպարներն աշխույժ են, կենսուրախ: Նրանց մեղմ հակադրությունները ստեղծում են լույսի և ստվերի խաղի պատրանք:

Երրորդ մասը շատ արագ է, փոթորկուն: Երաժշտական կերպարներն ավելի բուռն են հակադրվում ու զարգանում՝ հուզական լարումը հասցնելով բարձրագույն աստիճանի:

«Լուսնի սոնատ» անվանումը Բեթհովենին չի պատկանում: Հեղինակն իր ստեղծագործությունն անվանել է «Սոնատ–ֆանտազիա»: Բեթհովենի մահից հետո՝ 1832 թ., այն «Լուսնի սոնատ» է անվանել գերմանացի գրող և երաժշտական քննադատ Լյուդվիգ Ռելշտաբը, որի երևակայության մեջ երաժշտությունն արթնացրել է լուսնային բնապատկեր:

Երաժշտությունը վերացական, ինչյունային արվեստի տեսակ է, որը յուրաքանչյուրը կարող է ընկալել և վերապրել յուրովի: «Լուսնի սոնատը» լսելիս ամեն ոք ունենում է իր ապրումներն ու մտապատկերները:

ԼՅՈՒԴՎԻԳ ՎԱՆ ԲԵԹՀՈՎԵՆ

(1770–1827)

Համաշխարհային արվեստի պատմության մեջ կան հանճարներ, որոնց անունները դարերի ընթացքում չեն խամրում: Այդպիսի համամարդկային մեծություն է գերմանացի կոմպոզիտոր Լյուդվիգ վան Բեթհովենը: Ավելի քան երկու դար առաջ գրված նրա երաժշտությունն այսօր էլ արդիական է, հուզիչ ու հարազատ:

Բեթհովենի կյանքն անցել է ծանր պայմաններում: Հայրը պալատական երգիչ էր և միայն իր աշխատանքով դժվարանում էր հոգալ ընտանիքի կարիքները: Նկատելով փոքրիկ Լյուդվիգի երաժշտական բացառիկ տաղանդը՝ նա անմիջապես միջոցներ է ձեռնարկել, որ զարգացնի այն:

Սկսվել են երեխայի ամենօրյա պարապմունքները: Հինգ տարեկան Բեթհովենը նվագում էր երգեհոն, ջութակ, դաշնամուր, հետագայում նաև ալտ, ֆլեյտա: Ութ

տարեկանում նա անդրանիկ համերգով հանդես է եկել հայրենի Բոնն քաղաքում, իսկ տասը տարեկանից ելույթներ է ունեցել տարբեր քաղաքներում:

Արտակարգ տաղանդով օժտված պատանին իր հետաքրքիր ստեղծագործություններով և փայլուն կատարողական արվեստով հիացնում էր ունկնդիրներին: Լսելով Բեթհովենին՝ Մոցարտը բացականչել է. «Ուշադրությո՛ւն դարձրեք այս երիտասարդին, նա երբևիցե ամբողջ աշխարհին կստիպի խոսել իր մասին»:

Ստեղծագործական հաջողություններ ունենալով՝ Բեթհովենը միշտ եղել է կարիքի մեջ, հաճախ մենության ու կարոտի զգացումը պատել է նրան: Ստեղծագործական բուռն ծաղկման շրջանում կոմպոզիտորը զրկվել է լսողությունից: Այս դժբախտությունը նա շատ ծանր է տարել՝ հրաժարվելով ելույթներից, խուսափելով հասարակությունից: Բայց չստեղծագործել չէր կարող: Հանճարեղ կոմպոզիտորի ամենակատարյալ և հասուն ստեղծագործությունները գրվել են հենց այդ տարիներին:

1826 թվականի դեկտեմբերին բաց կառքով ճամփորդելիս Բեթհովենը ծանր հիվանդացել է: 1827 թվականի մարտի 26–ին նա հրաժեշտ է տվել կյանքին: Բեթհովենի թաղման օրը հայտարարվել է ազգային սուգ, Վիեննայի դպրոցներում դադարեցվել են դասերը:

Վեհ ու հպարտ Բեթհովենը սիրել է մարդկանց, փառաբանել ազատությունը, եղբայրությունը և այս գաղափարներով հագեցրել իր բոլոր ստեղծագործությունները:

Այն տունը, որտեղ ապրել է Բեթհովենը

Բեթհովենի դոյալը

Բեթհովենը թողել է մեծ երաժշտական ժառանգություն: Նա գրել է ինը սիմֆոնիա, «Ֆիդելիո» օպերան, «Պրոմեթևսի արարչությունը» բալետը, սոնատներ, նախերգանքներ ու բազմաթիվ այլ ստեղծագործություններ դաշնամուրի, ջութակի և այլ նվագարանների համար:

Ունկնդրե՛ք

Ունկնդրե՛ք Լ. Բեթհովենի «Ուրախության ձոներգը» 9–րդ սիմֆոնիայից:

Սովորե՛ք

Սովորե՛ք «Հաբըրբան» հայկական ժողովրդական երգը: Կատարե՛ք խմբով՝ միասին, ապա աղջիկ–տղա՝ առանձին խմբերով, այնուհետև՝ մեկ աղջիկ և մեկ տղա միասին:

ՀԱԲԸՐԲԱՆ

Հայկական ժողովրդական երգ





Տղա Հաբըրբա՛ն:
Աղջիկ Ջանե՛, ջա՛ն:
Տղա Բուսել ես բաղի միջին,
Շամամի թաղի միջին,
Գիշեր–ցերեկ միալար
Դու ես իմ խաղի միջին:

Աղջիկ Հաբըրբա՛ն:
Տղա Ջանե՛, ջա՛ն:
Աղջիկ Աշուղի պես խա՛ղ ասա,
Բլբուլի պես տա՛ղ ասա,
Ինչքան որ գովես, արժեմ,
Իմ մոր գովակա՛ն փեսա:

«Հաբըրբա՛ն»–ը բացականչություն է, որով երգողը հրավիրում է մյուս երգողին պատասխանելու «ջանե՛, ջա՛ն»:

Ունկնդրեք

«Հաբըրբան» երգն ունկնդրե՛ք նաև Կոմիտասի անվան լարային քառյակի կատարմամբ: Ուշադրությո՛ւն դարձրեք, թե ինչպես են աղջկա և տղայի հարցն ու պատասխանը հնչում տարբեր տեմբր ունեցող նվագարանների կատարմամբ՝ ապահովելով երաժշտական կերպարի անդրադարձը նվագարանի միջոցով:

ՍԵՊՏԻՄԱ ԻՆՏԵՐՎԱԼ

Սեպտիմա նշանակում է յոթերորդ:

Սեպտիման հնչյունաշարի որևէ ձայնաստիճանի և, նրանից հաշված, յոթերորդ ձայնաստիճանի միջև ընկած տարածությունն է:

Ներկայացնենք ***րե, մի, ֆա, սո, լա, սի բեմոլ, դո*** հնչյունաշարի սեպտիմա ինտերվալը.



«Հաբըրբան» երգի մեղեդու հնչյունաշարում ցո՛ւյց տվեք ***սեպտիմա*** ինտերվալ կազմող հնչյունները:

Հարցեր և առաջադրանքներ

- Ո՞րն է երաժշտական կերպարների ներգործության ուժը:
- Ո՞վ է գրել «Լուսնի սոնատը»:
- Բնութագրե՛ք «Լուսնի սոնատը»:
- Ինչ գիտեք Լ. Բեթհովենի մասին:
- «Հաբըրբան» երգը կատարե՛ք դերերով՝ աղջիկ–տղա:
- Ինչ ինտերվալներ գիտեք:

ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Դուք իմացաք, որ երաժշտական կերպարները ստեղծագործության բնույթի և բովանդակության արտահայտիչներն են: Որքան խորն են կոմպոզիտորի զգացմունքները, կյանքից ստացած տպավորությունները, այնքան բազմազան ու տպավորիչ են երաժշտական կերպարները: Այդ կերպարներն էլ երաժշտական ստեղծագործությունը դարձնում են զգացմունքային ու հրապուրիչ:

ԽԱՉԲԱՌ



1. Երկու ձայնաստիճանների միջև ընկած տարածությունը:
2. Կանացի բարձր ձայնի տեսակ:
3. Ավստրիացի հանճարեղ կոմպոզիտոր:
4. Երաժշտության տեսակների միավորումն ըստ ընդհանուր հատկանիշերի:
5. Երաժշտության աստիճանական ուժեղացումը:
6. Երգչական ժանր:
7. Բալետի դերասանուհի:
8. «Լուսնի սոնատի» հեղինակը:
9. «Դավիթ բեկ» օպերայի հեղինակը:
10. Երաժշտության աստիճանական մեղմացումը:
11. Հնչյունաշարի ամենակայուն հնչյունը:

Եթե խաչբառի հարցերին ճիշտ պատասխանեք, ապա ընդգծված ուղղահայաց սյունակում կկարդաք արվեստի ճյուղերից մեկի անվանումը:

ԹԵՄԱ 2

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ցանկացած երաժշտական ստեղծագործության ներքին զարգացումն արտահայտվում է տարբեր բնույթ, բովանդակություն ունեցող երաժշտական կերպարների միջոցով: Այդ կերպարները լինում են առանձին ստեղծագործությունների տեսքով՝ երգ, մանրանվագ, կամ հանդես են գալիս մեծ ստեղծագործության մեջ՝ օպերայի, բալետի, սիմֆոնիայի, սոնատի և այլն: Մեծ ստեղծագործություններում երաժշտական կերպարները միմյանց հետ որոշակի փոխգործակցության մեջ են. մերթ համադրվում են՝ լրացնելով իրար, մերթ հակադրվում են: Տարաբնույթ կերպարները՝ առնական ու քնարական, քայլերգային ու պարային, կենսուրախ ու տխուր, մեկ հնչում են ուժեղ ու մեղմ, մեկ արագ ու դանդաղ:

Հակադիր կերպարների բախումով ստեղծագործության երաժշտական միտքը զարգանում է և հասնում գագաթնակետին՝ ունկնդրի մեջ առաջացնելով ավելի ուժեղ և խոր ապրումներ: Երաժշտության նման զարգացումից հետո տեղի է ունենում լարվածության աստիճանական թուլացում, որը հանգեցնում է ստեղծագործության ավարտին: Երաժշտության այդպիսի զարգացումն անվանում են **երաժշտական դրամատուրգիա:**

ԴԱՍԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԱՅԻ ԺԱՆՐ

Սիմֆոնիա բառը հունարեն է, նշանակում է **համահնչունություն, ներդաշնակ երաժշտություն**: Սիմֆոնիան երաժշտական կարևոր ժանրերից է: Այդ լուրջ և բարդ ժանրը ստեղծվել է XVII–XVIII դարերում: XVII դարում սիմֆոնիա էին անվանում օպերայի նախերգանքը, սյուիտը:

Դասական սիմֆոնիայի ձևավորումը տեղի է ունեցել XVIII դարի կեսերին և կապված է ավստրիացի կոմպոզիտորներ Հայդնի, Մոցարտի և գերմանացի կոմպոզիտոր Բեթհովենի ստեղծագործության հետ: Դասական սիմֆոնիան բազմամաս ստեղծագործություն է: Ծանոթացեք Մոցարտի 40–րդ սիմֆոնիային, որը հեղինակի լավագույն և սիրված ստեղծագործություններից է:

Ունկնդրեք

Ունկնդրեք սիմֆոնիան և հետևեք երաժշտական կերպարների զարգացմանը: Աշխատեք հիշել այդ կերպարները մարմնավորող մեղեդիները և հնչող երաժշտության մեջ ճանաչեք դրանք: Հետևելով երաժշտական կերպարների զարգացմանը՝ սիմֆոնիան կընկալեք ամբողջությամբ: Այն ձեր հոգում կարթնացնի բազմապիսի հույզեր, կպարգևի լուսավոր մտքեր և ուրախության զգացում:

Սիմֆոնիայի առաջին մասում երաժշտական գլխավոր կերպարը մարմնավորող քնարական, հուզումնալից մեղեդին հանդիպում է երկրորդ երաժշտական կերպարին, որն ունի նուրբ, ջինջ և լուսավոր հնչերանգ: Այդ կերպարների հանդիպումը նպաստում է երաժշտության հետագա զարգացմանը:

Երկրորդ մասում երաժշտության լարվածությունն աճում է, հնչերանգները դառնում են ավելի թախծոտ, անհանգիստ: Առանձնապես տպավորիչ է աղերսական հնչերանգ ունեցող մեղեդին, որն ուժեղացնում է երաժշտության հուզականությունը:

Երրորդ մասն աշխույժ է և ունի պարային բնույթ: Հեղինակն այս մասն անվանել է **մենուետ**, որը եռամաս չափ ունեցող ֆրանսիական արքունական պար է: Այս մասում նույնպես հակադրվում են երկու կերպարներ: Առաջին կերպարը առնական է, կամային, իսկ երկրորդը՝ քնքուշ, նազանքով լի, որը կարողանում է մեղմել առաջին կերպարի առաջացրած լարվածությունը:

Չորրորդ մասի երաժշտությունն արագընթաց է, եռանդուն, կենսուրախ: Առաջին երաժշտական կերպարը մարմնավորող վերընթաց, չարաճճի, ծիծաղկոտ մեղեդին և նվագախմբի նվագարանների փոխկանչերը կատակային հնչերանգ են տալիս երաժշտությանը: Առաջին կերպարին հակադրվում է երկրորդ կերպարը, որն ունի նուրբ, քնարական, լուսավոր բնույթ: Այս երկու կերպարների հանդիպման արդյունքում երաժշտության զարգացումը հանգեցնում է կենսահաստատ ավարտին:

Կատարեք

Պատմե՛ք Մոցարտի 40–րդ սիմֆոնիայից ստացած ձեր զգացողությունների, տպավորությունների, երևակայական երաժշտական կերպարների մասին:

Սովորեք

Սովորե՛ք Մոցարտի «Օրորոցային» երգը և ձեր կատարմամբ ստեղծե՛ք համապատասխան երաժշտական կերպար:

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

Քնի՛ր, իմ մանկի՛կ, քնի՛ր,
Քնեցին գառնուկ, արտույտ,
Նիրհեցին այգի, պարտեզ,
Թիթեռ, մեղու և բզեզ:
Լուսինը արծաթ շողով
Նայում է քեզ ժպիտով,
Քնի՛ր արծաթ շողի տակ,
Քնի՛ր, իմ մանկի՛կ, քնի՛ր,
Քնի՛ր, քնի՛ր:

Ո՞վ կա քեզնից երջանիկ,
Անհոգ մանկի՛կ իմ խնդուն,
Առջևդ՝ շատ խաղալիք,
Սեղանդ՝ մրգերով լի,
Ամեն ինչ քեզ է նվեր,
Միայն, մանկի՛կս, քնի՛ր,
Քնի՛ր արծաթ շողի տակ,
Քնի՛ր, իմ մանկի՛կ, քնի՛ր,
Քնի՛ր, քնի՛ր:

ԴԻՐԻԺՈՐ

Սիմֆոնիան կատարում է սիմֆոնիկ նվագախումբը, որը ղեկավարում է դիրիժորը:

Դիրիժոր բառը ֆրանսերեն է և նշանակում է **ուղղություն տվող**, երաժշտական ստեղծագործության կոլեկտիվ կատարումը **ղեկավարող**: Կոլեկտիվ կատարում է պահանջում սիմֆոնիկ, խմբերգային, օպերային երաժշտությունը: Հայերենում *դիրիժոր* բառի փոխարեն օգտագործում են նաև ***նվագավար*** բառը:

Դիրիժորը հետևում է, որ երաժշտական ստեղծագործությունը կատարվի միաձույլ, ներդաշնակ հնչողությամբ: Աջ ձեռքով նա ցույց է տալիս երաժշտության չափը, տեմպը, շարժընթացը, իսկ ձախ ձեռքով՝ սիմֆոնիկ նվագախմբի նվագարանների մուտքը, կատարվող երաժշտության բնույթը, նրբերանգները: Փաստորեն դիրիժորը միջնորդ է դառնում կոմպոզիտորի և ունկնդրի միջև՝ հնչեցնելով երաժշտությունը և իրականացնելով կոմպոզիտորի ստեղծագործական մտահղացումները:

Դիրիժորը պետք է լինի բազմակողմանի զարգացած երաժիշտ, ունենա անթերի լսողություն և հիշողություն, կարողանա դաշնամուր կամ որևէ նվագարան նվագել:

XX դարի խոշորագույն դիրիժորներից են Արթուրո Տոսկանինին (Իտալիա), Հերբերտ ֆոն Կարայանը (Ավստրիա), Ալեքսանդր Մելիք–Փաշաևը (Մելիք–Փաշայանը) (Ռուսաստան), Օհան Դուրյանը (Հայաստան) և ուրիշներ:

Արթուրո Տոսկանինի (1867–1957)

Ալեքսանդր Մելիք–Փաշայան (1905–1964)

Հերբերտ ֆոն Կարայան (1908–1989)

Օհան Դուրյան (1922–2011)

ՕՀԱՆ ԴՈՒՐՅԱՆ

(1922–2011)

Հայ անվանի դիրիժոր, կոմպոզիտոր Օհան Դուրյանը ծնվել է 1922 թ. սեպտեմբերի 8–ին Երուսաղեմում: Ավարտել է տեղի կոնսերվատորիան, ապա մեկնել Փարիզ, դիրիժորական արվեստի դասեր քաղել անվանի մասնագետներից: Օհան Դուրյանը 35 տարեկան էր, երբ եկավ Հայաստան: Նա երկար տարիներ եղել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի, ինչպես նաև ռադիոյի և հեռուստատեսության սիմֆոնիկ նվագախմբերի գլխավոր դիրիժորը: Համերգներով շրջագայել է աշխարհի տարբեր երկրներում և ղեկավարել 100–ից ավելի սիմֆոնիկ նվագախումբ:

Ֆրանսիայի կառավարությունը Օհան Դուրյանին շնորհել է «Արվեստի և գրականության ասպետ» տիտղոսը:

Օհան Դուրյանի ղեկավարությամբ հնչել են հայ և այլազգի բազմաթիվ կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Օհան Դուրյանը հեղինակել է մի շարք ստեղծագործություններ, այդ թվում՝ «Զոն հայրենիքիս» (Ավ. Իսահակյանի խոսքերով)՝ երգչախմբի, մենակատարների և սիմֆոնիկ նվագախմբի համար, «Չորս պաստորալ»՝ կամերային նվագախմբի համար, «Օրատորիա»՝ Կոմիտասի երգերի թեմաներով, «Կոմիտասական»՝ երկու սյուիտ սիմֆոնիկ նվագախմբի համար, «Սիմֆոնիետա»՝ լարային նվագախմբի, դաշնամուրի և ֆլեյտայի համար և այլն:

Օհան Դուրյանը մահացել է 2011 թվականին Երևանում և թաղված է Կոմիտասի անվան պանթեոնում:

Սովորեք

Սովորե՛ք Կոմիտասի «Իմ չինարի յարը» երգը:
Երգե՛ք երկձայն և հետևե՛ք, թե ինչպես է երգը զարգանում:

ԻՄ ՉԻՆԱՐԻ ՅԱՐԸ

Կոմիտաս

Ոչ շատ արագ, սիրալիր

Մեներգ

Ա - րև թրոռ - վը - ռով ե - լավ, Իմ չի - նա - րի յա - րը,
Թրշ - նա - մու որ - դին մեռ - նի, Իմ չի - նա - րի յա - րը,

Մեր բա - նը կրոռ - վով ե - լավ, Դար - դի - ման յա - րը:
Ի - րա չար սրր - պով ե - լավ, Դար - դի - ման յա - րը:

pp *p* *p* *mf* *p*
Իմ չի - նա - րի յա - րը, Իմ չի - նա - րի յա - րը,

Խումբ

Իմ չի - նա - րի յա - րը, չի - նար յա - րը,

pp *p*
Իմ չի - նա - րի յա - րը, Գո - վա - կան յա - րը:

իմ յա - րը, Գո - վա - կան յա - րը:

ԻՄ ՉԻՆԱՐԻ ՅԱՐԸ

Արև թռվռով ելավ,
Իմ չինարի յարը,
Մեր բանը կռվով ելավ,
Դարդիման յարը:
Թշնամու որդին մեռնի,
Իմ չինարի յարը,
Իրա չար սրտով ելավ,
Դարդիման յարը:

Կրկներգ Իմ չինարի յարը,
Իմ չինարի յարը,
Իմ չինարի յարը,
Գովական յարը:

Քարափի ծերին կանչի,
Իմ չինարի յարը,
Թող թշնամին ամաչի,
Դարդիման յարը:
Արևիդ մեռնեմ, յա՛ր ջան,
Իմ չինարի յարը,
Չինարի պես կանաչի,
Դարդիման յարը:

Կրկներգ Իմ չինարի յարը,
Իմ չինարի յարը,
Իմ չինարի յարը,
Գովական յարը:

Իմացե՛ք, որ երգի միաձայն կատարումից երկձայնին անցնելը նույնպես երաժշտության զարգացում է:

Դուք նկատեցիք, որ «Իմ չինարի յարը» երգը ամբողջությամբ միանման ուժգնությամբ չի կատարվում: Սկսվում է մեղմ, ապա ուժեղանում, հետո նորից մեղմանում: Կատարման նրբերանգները նպաստում են երաժշտության զարգացմանը:

Նախորդ դասարաններից գիտեք, որ երաժշտության հնչման նրբերանգները նշանակվում են իտալական բառերի կրճատ նշումներով և կոչվում են **դինամիկայի** կամ **ուժգնության նշաններ:**

Դինամիկայի նշաններն են.

pp (պիանիսիմո) — շատ մեղմ
p (պիանո) — մեղմ
mp (մեցցո պիանո) — ոչ շատ մեղմ
mf (մեցցո ֆորտե) — ոչ շատ ուժեղ
f (ֆորտե) — ուժեղ
ff (ֆորտիսիմո) — շատ ուժեղ

Երաժշտության աստիճանական ուժեղացումը նշանակվում է ***crescendo (կրեշենդո)*** բառով կամ բացվող սլաքի նշանով. <

Երաժշտության աստիճանական մեղմացումը նշանակվում է ***diminuendo (դիմինուենդո)*** բառով կամ փակվող սլաքի նշանով. >

Հարցեր և առաջադրանքներ

- Ինչ է նշանակում երաժշտական կերպարի զարգացում:
- Ինչ է նշանակում սիմֆոնիա, երբ է ստեղծվել այդ ժանրը:
- Ինչպիսի՞ կառուցվածք ունի Մոցարտի 40–րդ սիմֆոնիան:
- Կատարման ինչպիսի՞ նրբերանգներ ունի «Իմ չինարի յարը» երգը:
- Որո՞նք են ուժգնության նշանները:
- Ինչ դեր է կատարում դիրիժորը:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ԵՎ ԿՅԱՆՔԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Պատահական չէ, որ կյանքի ներքին հակասությունները և պատմական խոշոր իրադարձությունները հիմք են դարձել ոչ միայն գրական ստեղծագործությունների (վեպ, պոեմ), այլև երաժշտական բարդ ժանրերի (օպերա, կանտատ և այլն) ստեղծման համար:

Շարունակե՛ք ծանոթանալ կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի «Դավիթ բեկ» օպերայի հերոսների երաժշտական կերպարներին: Նրանք իրական մարդիկ են, ովքեր մարտնչել են հայրենիքի ազատագրման ու պաշտպանության համար:

Կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը կարողացել է ստեղծել այնպիսի երաժշտական կերպարներ, որոնք տարբերվում են ոչ միայն բովանդակությամբ ու կառուցվածքով, այլև երաժշտական լեզվի ազգային հնչերանգով: Օրինակ՝ Ռուսաստանի հետ բարեկամության գաղափարը արտահայտված է ռուսական դեսպանի երգով (արիոզոյով), իսկ հայ–վրացական բարեկամությունը՝ վրացական ազգային երաժշտության երանգ ունեցող «Հարի հարալո» երգով և պարով:

Ունկնդրե՛ք «Լեզգինկան» և «Ռուս դեսպանի արիոզոն», «Դավիթ բեկ» օպերայից:

Ունկնդրեք

Սովորեք

Սովորե՛ք «Հարի հարալո» երգը: Երգե՛ք երկձայն և արտահայտե՛ք երգի բնույթը, բովանդակությունը: Ցո՛ւյց տվեք երաժշտական կերպարի զարգացումը:

Ուշադրությո՛ւն դարձրեք մեկ վանկով մի քանի հնչյունները ճիշտ երգելու վրա:

ՀԱՐԻ ՀԱՐԱԼՈ

Երաժշտ.՝ Ա. Տիգրանյանի



Խումբ Հարի հարալո, հարի հարալո,
Եղբայրության գավաթը մեր
Զոնենք քաջերին: } *2 անգամ*

Մեներգ Հայրենիքի սերն է անմար
Ուժ տալիս քաջին:
Քաջ զինվորի սերն է անմար
Բույր տալիս կյանքին:

Խումբ Հարի հարալո, հարի հարալո,
Եղբայրության գավաթը մեր
Զոնենք քաջերին: } *2 անգամ*

Մեներգ Եկե՛ք սրտով գովքն անենք

Մեր հերոսների:
Անմահ մնան վեհ գործերը
Քաջ մարտիկների:

Խումբ Հարի հարալո, հարի հարալո,
Եղբայրության գավաթը մեր
Ձոնենք քաջերին:

Կատարեք **Ստեղծե՛ք ռիթմական նվագակցություն և նվագակցե՛ք երգեցողությանը: Իմացե՛ք, որ ռիթմական նվագակցությունը նույնպես նպաստում է երաժշտության զարգացմանը:**

Հայ ժողովրդի երաժշտական կերպարը բնութագրելու համար Արմեն Տիգրանյանը օպերայում օգտագործել է հայկական ժողովրդական երգեր, օրինակ՝ «Շախով–շուխով» հայկական ժողովրդական երգի մեղեդին, որը օպերայում հնչում է բազմաձայն՝ նոր բովանդակությամբ:

Կոմպոզիտորը ցույց է տվել, թե ժողովուրդը ինչպես է ոտքի ելնում և թշնամուց պաշտպանում իր հայրենիքը:

Օպերայի հերոսների երաժշտական կերպարները մշտական զարգացման մեջ են՝ կապված օպերայի բովանդակության հետ:

Տեսարան «Դավիթ բեկ» օպերայից

Ունկնդրե՛ք «Լինենք միշտ կուռ» խմբերգը և «Դավիթ բեկի» երգը, ապա սովորե՛ք «Շախով–շուխով» հայկական ժողովրդական երգը:

Ունկնդրեք

ՇԱԽՈՎ–ՇՈՒԽՈՎ

Հայկական ժողովրդական երգ



Աշուն եկավ ցողալեն,
Ծառ ու թփեր դողալեն,
Շախով–շուխով ման կգամ,
Շորորալեն պար կգամ: } *2 անգամ*

Սարերը ման եմ եկել,
Ոտքս քարին է դիպել:
Շախով–շուխով ման կգամ,
Շորորալեն պար կգամ: } *2 անգամ*

Կատարեք «Դավիթ բեկ» օպերայի հեղինակին հաջող վե՞լ է երաժշտության միջոցով ստեղծել համապատասխան կերպարներ: Որքանո՞վ են այդ երաժշտական կերպարները արտահայտում օպերայի միտքը, բովանդակությունը:

Տեսարան «Դավիթ բեկ» օպերայից

Հարցեր և առաջադրանքներ

- Պատմե՛ք երաժշտության և կյանքի փոխկապվածության մասին:
- Պատմե՛ք «Դավիթ բեկ» օպերայի երաժշտական կերպարների մասին:
- Ո՞ր ազգի երաժշտական կերպարն է մարմնավորում «Հարի հարալո» երգը:
- Օպերայի և բալետի թատրոնում ունկնդրե՛ք «Դավիթ բեկ» օպերան:

ԴԱՍԱԿԱՆ ԿՈՆՑԵՐՏԻ ԺԱՆՐ

Կոնցերտը նույնպես դասական երաժշտության տարածված ժանրերից է: ***Կոնցերտ*** բառը լատիներեն նշանակում է **մրցել, մրցակցել**, իսկ իտալերեն՝ **համաձայնություն, ներդաշնակություն**: Սիմֆոնիայի և սոնատի պես կոնցերտը բազմամաս երաժշտական ստեղծագործություն է, որի եզրային մասերն արագ են, իսկ միջին մասը՝ դանդաղ:

Արամ Խաչատրյան

Կոնցերտը մենակատարի և նվագախմբի միջև երաժշտական կերպարների մրցություն է, որի ընթացքում կերպարները մեկ հակադրվում են, մեկ գալիս համաձայնության:

Կոնցերտը ստեղծվել ու զարգացել է Եվրոպայում XVII–XVIII դարերում: Հայտնի են Վիվալդիի, Մոցարտի, Բեթհովենի կոնցերտները, տարբեր ազգային կոմպոզիտորական դպրոցների պատկանող՝ Շոպենի, Շումանի, Մենդելսոնի, Գրիգի, Չայկովսկու, Ռախմանինովի և այլոց հիանալի կոնցերտները:

Դաշնակահար Լև Օբորին

Կոնցերտը սիրված ժանր է նաև Հայաստանում: Հայ կոմպոզիտորներն արժեքավոր ստեղծագործություններ են գրել այդ ժանրում: Արամ Խաչատրյանի և Ալեքսանդր Հարությունյանի՝ դաշնամուրային, Ղազարոս Սարյանի՝ ջութակի, Գևորգ Արմենյանի՝ ֆլեյտայի, Գեղունի Չթչյանի՝ ձայնի համար գրված կոնցերտները հաստատուն տեղ են գրավում տարբեր երկրների երաժիշտների կատարողական երկացանկում:

Արամ Խաչատրյանի՝ դաշնամուրի և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված կոնցերտը հայ իրականության մեջ առաջինն է: Գրվել է 1937 թ. և նվիրված է կոնցերտի առաջին կատարող, ռուս մեծ դաշնակահար Լև Օբորինին:

Արամ Խաչատրյանի «Դաշնամուրի կոնցերտը» բաղկացած է երեք մասից:

Ունկնդրե՛ք

Ունկնդրե՛ք կոնցերտի առաջին մասը:

Առաջին մասն արագ է: Նվագախմբի կարճ մուտքից հետո հնչում է գլխավոր երաժշտական կերպարը (թեման), որն ունի հանդիսավոր բնույթ: Տպավորություն է ստեղծվում, թե գլխավոր «հերոսը» հրավիրում է մասնակից լինելու հետաքրքիր երաժշտական իրադարձության: Այս առնական երաժշտական կերպարին հաջորդում է հակադիր կերպարը՝ նրբագեղ, հեզաճկուն, պարային մեղեդին, որը հարազատ է հայ ժողովրդական քնարական բնույթի պարերին: Ունկնդիրը կզգա, որ նվագախմբում հնչում է ժողովրդական ոգով մեղեդի, որը նվագում է հոբոյը՝ ընդօրինակելով դուդուկի հնչողությանը, ապա ջութակներն իրենց մեղմ նվագի հնչողությունը նմանեցնում են քամանչային: Մեկը մյուսի հետևից ծնվում են երաժշտական բազմաբնույթ, վառ կերպարներ՝ կարծես ներկայացնելով ժողովրդական կյանքի և բնության գեղեցիկ պատկերներ:

Ունկնդրե՛ք

Ունկնդրե՛ք կոնցերտի երկրորդ մասը:

Կոնցերտի երկրորդ մասը դանդաղ է, քնարական: Նվագախմբի կարճ մուտքից հետո սկսում է նվագել դաշնամուրը: Հնչում է մի չքնաղ երգային մեղեդի: Այդ լայնաշունչ, թախծոտ մեղեդին կատարման ընթացքում փոփոխվում է՝ ստանալով նորանոր հնչերանգներ: Կերպարն աստիճանաբար զարգանալով՝ կոնցերտի այս մասի հնչողությունը դարձնում է ավելի հուզական ու ջերմ:

Ունկնդրե՛ք

Ունկնդրե՛ք կոնցերտի երրորդ մասը:

Երրորդ մասը արագ է, սրընթաց: Այս եզրափակիչ մասում երաժշտությունը հագեցած է վառ կերպարներով, որոնք ուրախ տրամադրություն են առաջացնում և ստեղծում ժողովրդական տոնախմբության պատկեր: Կոնցերտի երրորդ մասն իր կենսախինդ բնույթով կարծես ազդարարում է գեղեցիկի ու բարու հաղթանակը:

Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբը Դիրիժոր՝ Մ. Մալոնցյան

Արամ Խաչատրյանի՝ դաշնամուրի և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված կոնցերտը փայլուն ստեղծագործություն է: Կոնցերտի երաժշտական լեզուն թե՛ ռիթմի, թե՛ հնչերանգների առումով ազգային է ու տպավորիչ: Երաժշտությունը լսելուց հետո այն զգացումն ես ունենում, որ, իրոք, կյանքը շատ գեղեցիկ է ու հետաքրքիր: Պետք է ապրել և արարել բարին ու գեղեցիկը:

Արամ Խաչատրյանը դաշնամուրի կոնցերտում կիրառել է հայկական ժողովրդական երգերի մեղեդային դարձվածքներ, որոնք նույնիսկ ձևափոխված վիճակում հարազատ են հնչում մեր լսողությանը:

Երբ մեղեդին ձևափոխության է ենթարկվում՝ հնչելով նոր հնչերանգով և տրամադրությամբ, կոչվում է **վարիացիա**: Այն իտալերեն բառ է և նշանակում է փոփոխություն, տարբերակ:

Վարիացիայի ժամանակ կարող է փոփոխվել մայր մեղեդու թե՛ ռիթմը, թե՛ մեղեդին:

Վարիացիան ավելի հասկանալի դարձնելու համար տեսնենք, թե ինչպիսի փոփոխության է ենթարկվել «Լորիկ» ժողովրդական երգը:

ԼՈՐԻԿ

Հիմնական պարբերակ



Չափավոր

Չևափոխված պարբերակ



Վարիացիայի տեսակներից է նաև մեղեդու հնչեցնելը նվագակցությամբ:

Կատարեք Այս ռիթմական նվագակցությունը կատարե՛ք «Լորիկ» երգի հետ: Ի՞նչ փոփոխության է ենթարկվել երգը:





Սովորեք Սովորե՛ք Արամ Խաչատրյանի «Գարուն Երևան» երգը:

Երգը կատարե՛ք ջերմությամբ ու քնքշանքով, որ զգացվի ձեր սերը մայրաքաղաքի նկատմամբ:

ԳԱՐՈՒՆ ԵՐԵՎԱՆ

Խոսք՝ Ա. Գրաշու
Երաժշտ.՝ Ա. Խաչատրյանի




Ուր էլ զը - նամ, ուր էլ մը - նամ, քեզ եմ հա - վիտ -

յան սի - րում, Ե - ռե - վան, Քեզ եմ հա - վիտ -


յան սի - րում, Ե - ռե - վա՛ն:

Կրկներգ


Իմ ջա - հել սրբ - ի Վառ ու վառ - ման հույսն ես, Ե - ռե - վա՛ն,


Իմ ժո - ղո - վրդ - ի Վառ աչ - քե - ռի լույսն ես, Ե - ռե - վա՛ն,


Իմ Հա - յաս - տա - նի Զարդն ես, Ե - ռե - վա՛ն,

Իմ Հա - յաս - տա - նի զարդն ես, Ե - ռե - վա՛ն:

Գարո՛ւն Երևան, սիրո՛ւն Երևան,
Վարդեր ես ճամփիս փռում, Երևա՛ն,
Ուր էլ գնամ, ուր էլ մնամ,
Քեզ եմ հավիտյան սիրում, Երևա՛ն: } *2 անգամ*

Կրկներգ

Իմ ջահել սրտի
Վառ ու վառման հույսն ես, Երևա՛ն,
Իմ ժողովրդի
Վառ աչքերի լույսն ես, Երևա՛ն,
Իմ Հայաստանի
Զարդն ես, Երևա՛ն: } *2 անգամ*

Դու մարգարիտ ես շողերով սիրուն,
Ծաղիկ սարերի շաղերով սիրուն,
Կառույցներով, կայաններով,
Լույս ու լալազար թաղերով սիրուն: } *2 անգամ*

Կրկներգ

Իմ ջահել սրտի
Վառ ու վառման հույսն ես, Երևա՛ն,
Իմ ժողովրդի
Անուշ աչքի լույսն ես, Երևա՛ն,
Իմ Հայաստանի
Զարդն ես, Երևա՛ն: } *2 անգամ*

Զուգվել, զարդարվել շորերով ալվան,
Դու նորահարս ես դարձել, Երևա՛ն,
Հայաստանի գարնան գրկում
Ծաղկի՛ր, ծիծաղի՛ր, երգի՛ր, Երևա՛ն: } *2 անգամ*

Կրկներգ

Իմ ջահել սրտի
Վառ ու վառման հույսն ես, Երևա՛ն,
Իմ ժողովրդի
Անուշ աչքի լույսն ես, Երևա՛ն,
Իմ Հայաստանի
Զարդն ես, Երևա՛ն: } *2 անգամ*

ԳԱՐՈՒՆ ԵԿԱՎ, ԱՄԱՌ ԳՆԱՑ

Ժողովրդական երգ

Արագ, աշխույժ



Գարուն եկավ, ամառ գնաց,
Գարուն եկավ, ամառ գնաց,
Աչքս մնաց ճամփաներաց:
Մայրի՛կ ջան, մայրի՛կ ջան,
Մայրի՛կ ջան, մայրի՛կ ջան: } *2 անգամ*

Աստվածամոր խնդիր ունեմ,
Աստվածամոր խնդիր ունեմ՝
Մի դուռ բանա դարիբներաց:
Մայրի՛կ ջան, մայրի՛կ ջան,
Մայրի՛կ ջան, մայրի՛կ ջան: } *2 անգամ*

Ձյունը եկել ու հալել ա,
Ձյունը եկել ու հալել ա,
Լցվել ա փոսն ու սառել ա:
Մայրի՛կ ջան, մայրի՛կ ջան,
Մայրի՛կ ջան, մայրի՛կ ջան: } *2 անգամ*

ՕԿՏԱՎԱ ԻՆՏԵՐՎԱԼ

Օկտավան հնչյունաշարի և, նրանից հաշված, ութերորդ ձայնաստիճանի միջև ընկած տարածությունն է կամ առաջին ձայնաստիճանի կրկնությունը՝ մեկ ութնյակ բարձր:



օկտավա

Ինչպես տեսնում եք, «Գարուն եկավ, ամառ գնաց» երգի հնչյունաշարի ամենացածր և ամենաբարձր հնչյունների միջև ընկած տարածությունը կազմում է մեկ օկտավա:



օկտավա

Հարցեր և առաջադրանքներ

- Պատմե՛ք ձեր տպավորությունները Ա. Խաչատրյանի «Դաշնամուրի կոնցերտի» մասին:
- Ինչ դեր է կատարում սիմֆոնիկ նվագախումբը «Դաշնամուրի կոնցերտի» կատարման ժամանակ:
- Ինչ է վարիացիան:
- Ինչպիսի՞ փոփոխության է ենթարկվել «Լորիկ» ժողովրդական երգը:
- Ինչ ինտերվալներ գիտեք:
- Տանը ստեղծե՛ք երաժշտական ձայնադարան:

ԱՄՓՈՓՈՒՄ

Դուք ծանոթացաք դասական երաժշտության բարդ ժանրերին՝ օպերային, սիմֆոնիային, սոնատին, կոնցերտին: Համոզվեցիք, որ երաժշտությունը նուրբ արվեստ է, որն իր յուրօրինակ լեզվով կարողանում է արտահայտել բազմատեսակ զգացմունքներ, մտքեր:

Իմացաք նաև, որ երաժշտությունը չի կարող կոնկրետ առարկայի կամ երևույթի պատկերը լինել: Բայց կարող է արտահայտել այդ երևույթների ազդեցությամբ առաջացած հույզերն ու տրամադրությունները՝ ունկնդրի երևակայության մեջ առաջացնելով երաժշտական կերպարներ:

Նկատեցիք նաև, որ այդ կերպարները, միմյանց լրացնելով և հակադրվելով, երաժշտության զարգացումը հասցնում են գագաթնակետին՝ առաջացնելով ավելի խոր զգացմունքներ ու ապրումներ:

Շարունակե՛ք բարեկամությունը երաժշտության հետ: Այդ հրաշալի արվեստը ձեր առջև կբացի իր դռները և ուրախություն ու երջանկություն կպարգևի:

Արա Բաղդասարյան. **«Արարատ»**

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԺԱՄԱՆՑ

«ԾԱՂԻԿ»



1. Ըստ բարձրության դասավորված հնչյուններ:
2. Ստեղնային նվագարան:
3. Նվագախմբի ղեկավար:
4. Երաժշտական «գործող անձ»:
5. Հնչյունաշարի տեսակ:
6. Հնչյունաշարի տեսակ:
7. Պղնձյա փողային նվագարան:
8. Տղամարդու ձայնի տեսակ:
9. Երաժշտության տեսակների միավորումն ըստ ընդհանուր հատկանիշերի:
10. Պլաստիկ և ռիթմիկ շարժումների արվեստ:

ՄԵԾ ՊԱՍԸ ԵՐԵՍ–ԵՐԵՍ



Մեծ պասը երես–երես,
Ծառզարդար, Աստված սիրես,
Ոտքդ կընկնի մեծ Զատիկ,
Համբարձում հետդ բերես:

Զատկի՛ օրեր, ա՛նց կացեք,
Նոր տոնին ճամփա՛ բացեք,
Թո՛ղ Համբարձումը շուտ գա,
Մեզնից շատ բարև՛ արեք:

Համբարձումը գալիս ա,
Ծաղիկը ցնծալիս ա,
Ա՛յ գյուղում կանչող աղջիկ,
Ձենդ ծլվլալիս ա:

ԱՂՋԻ՛, ԱՆՈՒՆԴ՝ ՇՈՒՇԱՆ

Հայկական ժողովրդական երգ



Աղջի՛, անունդ՝ Շուշան,
Շորեր ունես խշխշան:

Արի՛ գնանք Դիլիջան,
Վզինդ՝ լալ ու մարջան:

Ծաղիկ, ծաղիկ, ծաղկաքաղ,
Լուս ու արև ոսկեմաղ:

Արի՛ գնանք տեսնելու,
Դու բլբուլ ես, ես էլ՝ բաղ:

ԱՐԻ՛ ԻՆՁ ԱՆԳԱԾ ԿԱԼ, Ա՛Յ ԴԻՎԱՆԱ ՍԻՐՏ

Սայաթ–Նովա



Դիվանա – խենթ
Հայա – ամոթ
Ադաբ – բարեկամություն
Ար – պատկառանք
Յար – սիրեցյալ
Ղալամ – գրիչ
Դավթար – մատյան
Դամաղի – մտածողություն

Էն բանն արա, վուր Աստծու շարքումն է,
Խրատնիրն գրած Հարանց վարքումն է,
Յիրիք բան կա՝ հոգու, մարմնու կարգումն է՝
Ղա՛լամ սիրե, գի՛ր սիրե, դա՛վթար սիրե:

Եկ, արի՛, սի՛րտ, մնա՛ դուն մե դամաղի,
Հալալ մտի՛կ արա հացի ու աղի,
Հենց բա՛ն արա՝ մարդ վրեդ չծիծաղի,
Խրա՛տ սիրե, սա՛բր սիրե, շա՛ր սիրե:

ԵՐԵՎԱՆԻ ԳԻՇԵՐՆԵՐԸ

Խոսք՝ Ա. Գրաշու
Երաժշտությունը՝ Ա. Դոլոխանյանի



Երևանի գիշերները հովասուն
Ձեր պարտեզում պայծառ հեքիաթ են ասում,
Ամեն ծաղկում չքնաղ դեմքն եմ քո տեսնում,
Կրծքիդ հևքն եմ, սրտիդ երգն եմ ես լսում:

ՕՐՈՐՈՅԱՅԻՆ

Երաժշտությունը՝ Մոցարտի

Դանդաղ



ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

Խոսք՝ Մ. Պեշիկթաշլյանի

Մշակումը՝ Ք. Կարա–Մուրզայի

Քայլերգային

Արտահայտիչ, հարաճուն եռանդով

I ձայն

II ձայն

mp Ի բյուր ձայ - նից բնու-թյան շը - քեղ, Թե երգք բըռ-

Բյուր ձայ - նից շը - քեղ

չին սի - ըռ - դա - բար, Մա-տունք կու - սին ա - մե - նա -

երգք սի - ըռ - դա - բար, Մա-տունք կու - սին

գեղ, Թե որ զար - նեն փա - փուկ քը - նար,

գեղ Թե որ զար - նեն փա - փուկ քը - նար:



Երբ ալևոր Մայրն Հայաստան
Տեսնե զորդիս յուր քովե քով,
Սըրտին խորունկ վերքըն դաժան
Քաղցր արտասվաց բուժին ցողով,
Ընդ աստեղոք ինչ կա սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն:

Մեկտեղ հոգնինք, մեկտեղ ցանենք,
Մեկտեղ թափինք մեր քըրտինքներ,
Ըզհունձ բարյաց հերկինս հանենք,
Որ կյանք առնուն Հայոց դաշտեր.
Ընդ աստեղոք ինչ կա սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն:

ԲԵՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Իմ ուսուցիչ 5
Երաժշտական կերպար 6
Լեպհո՛, լե՛, լե՛ 8
Քրիստափոր Կարա–Մուրզա 9
Դասարանային ռոնդո 11
Երաժշտական ժանր 13
Անձրևն եկավ 14
Կոմիտաս 16
Նա՛յ, նա՛յ 18
Ինտերվալներ 19
Երաժշտական կերպարը օպերայում 20
Արմեն Տիգրանյան 20
Տղամարդկանց քայլերգ 22
Երաժշտական կերպարների ներգործության ուժը 24
Լյուդվիգ վան Բեթհովեն 26
Հաբըրբան 28
Սեպտիմա ինտերվալ 30
Թեմայի ամփոփում 30
Խաչբառ 31
Երաժշտական կերպարի զարգացումը 32
Դասական սիմֆոնիայի ժանր 32
Օրորոցային 34
Դիրիժոր 35
Օհան Դուրյան 36
Իմ չինարի յարը 37
Կատարման նրբերանգները 39
Երաժշտական կերպարների և կյանքի փոխկապվածությունը 40
Հարի հարալո 41
Շախով–շուխով 43
Դասական կոնցերտի ժանր 45
Լորիկ 48
Գարուն երևան 49
Գարուն եկավ, ամառ գնաց 52
Օկտավա ինտերվալ 53
Ամփոփում 54
Երաժշտական ժամանց 55

ՀԱՎԵԼՎԱԾ

Մեծ պասը երես–երես 56
Աղջի՛, անունդ՝ Շուշան 57
Արի՛ ինձ անգաճ կալ, ա՛յ դիվանա սիրտ 58
Երևանի գիշերները 59
Օրորոցային 60
Եղբայր եմք մեք 61

ՅՈՒՐԻ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ, ԱԼԻՆԱ ԱՇՈՏԻ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

6–րդ դասարան

Վերահրատարակություն

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝ Մարիամ Կանայան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Խմբագիր՝ Գոհար Քալաշյան
Համակարգչային ձևավորումը՝ Արևիկ Հակոբյանի
Ժագ Թոփալագյանի
Համակարգչային նոտագրումը՝ Մարիամ Հարությունյանի

Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆԿԱՐՆԵՐ

էջ 3՝ © Հ. Կարապետյան, էջ 7՝ © www. photostock.am, էջ 9, 10, 13, 17, 18, 20, 21, 35, 42, 44, 45՝ © Ս. Առաքելյան, էջ 13՝ Հայաստանի ազգային արխիվ, էջ 26, 27՝ © http://inmozartsfootsteps.com, էջ 35՝ Արթուրո Տոսկանինի/Aime Dupont Studio, էջ 35, 36՝ © Ն. Դուրյան, էջ 47՝ © Յու. Յուզբաշյան, էջ 49՝ © Հ. Կարապետյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 4 տպ. մամուլ
Տառատեսակը՝ «Ասպետ»: Պատվեր՝ 03/Հ–21
Տպաքանակը՝ 39 802

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak